ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020թվականի առաջին կիսամյակի ընթացքում Մյասնիկյան համայնքում կայացվել է 3 հերթական և 2 արտահերթ ավագանու նիստեր, որի ընթացքում ավագանին կայացրել է 30 որոշում:
Համայնքի ղեկավարը 2020թվականի առաջին կիսամյակի ընթացում ընդունել է 47 որոշում և արձակել 11 կարգադրություն:Համայնքապետարան է մուտք եղել 179 գրություն և առաքվել 156 գրություն:
Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով բյուջեի կատարողականի և հնգամյա զարգացման ծրագրի կատարողականի վերաբերյալ տրվել է 2019թվականի հաշվետվություն և տեղադրվել համայնքապետարանի պաշտոնական կայքում և azdarar.am-ում:
Կազմվել է Մյասնիկյան համայնքի 2020թվականի տարեկան աշխատանքային պլանը և համայնքի աղբահանության սխեման.
2020թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեից 19868.6 հազար դրամ գումար հատկացվել է օրենսդիր և գործադիր մարմինների աշխատանքները իրականացնելու համար.

- 2085.0հազար դրամ գումար է հատկացվել <<Մյասնիկյանի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության պահպանման և սպասարկման համար,
- 930.0հազար դրամ գումար է հատկացվել <<Երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության պահպանման և սպասարկման համար,
- Համյանքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է՝ 19857.4 հազար դրամ,որից 1962.4 հազար դրամ գումարը ուղղվել է ֆոնդային բյուջե,6895.0հազար դրամ գումարը ուղղվել է վարչական բյուջե,
- 2020թվականի փետրվարին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության է արժանացել համայնքի<<Մյասնիկյան փողոցի ասֆալտապատում>> բյուջետային ֆինանսավորման ծրագրի հայտը,
  450.0 հազար դրամ գումար հատկացվել է Մյասնիկյան փողոցի ասֆալտապատման նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարման համար, ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 12660.0 հազար դրամ,
- Համաձայն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի,այժմ ընթանում են համայնքի մանկապարտեզի <<Ա>> և <<Բ>> մասնաշենքերի, բակի,ցանկապատի վերակառուցման աշխատանքներ,որը կավարտվի մինչև տարվա վերջ:
- Գարնանը համայնքում իրականացվեց ներհամայնքային ճանապարհների և դաշտամիջյան ճանապարհների ընթացիք նորոգման աշխատանքներ, որի շրջանակներում <<Կոտայք ՃՇՇ>> ՍՊ-ի կողմից կատարվեց փոսալցման և հարթեցման աշխատանքներ:
- Համայնքում ավարտին է մոտենում ներհամայնքային ճանապարհների արտաքին լուսավորության աշխատանքները և լուսավորության ցանցին է միացվել ևս մեկ փողոց՝ Շահումյան փողոցը.
- Համայնքում կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանության և սանիտարական

մաքրման ,ինչպես նաև կոյուղագծի մաքրման և կեղտաջրերի հեռացման աշխատանքներ. Համայնքում պարբերաբար կատարվել են աղտահանման և փողոցների լվացման աշխատանքներ

- Ծառատունկ իրականացնելու նպատակով ջրագիծ է անցկացվել դպրոցի տարածք և համայնքի կենտրոն.
- Համայնքի բյուջեից 6895.0 հազար դրամ գումար է տրամադրվել ՀՏՋՀ Ջրային տնտեսություն ծրագրերի իրականացման մասնաճյուղին որպես ներդրում՝ ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգման շինարարական աշխատանքների համաֆինանսավորման ծրագրի իրականացման համար,
- Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7րդ կետով և հիմք ընդունելով համայնքում գործող սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը համայնքի բյուջեից 1275.0հազար ՀՀ դրամ գումար որպես դրամական աջակցություն հատկացվել է հաշմանդամներին,հիվանդներին, սոցիալապես անապահով բնակիչներին՝ դեղորյաքի,վիրահատության,թաղման ծախսերի, ապրուստի կարիքները հոգալու համար.
- Հայաստանի Հանրապետությունում ԿՈՎԻԴ-19 համավարակի հետևանքով ստեղծված արտակարգ դրության պայմաններում բնակչության սոցիալական վիճակի որոշակիորեն բարելավման ուղղությամբ համայնքում բաժանվել է պարենայի օգնություն՝ ալյուրի տեսքով ,համայնքի բյուջեից 50ընտանիքի բաժանվել է մեկական պարկ ալյուր,իսկ 30ընտանիքի բաժանվել է <<Գոլդեն Ֆլոուր>> ՍՊԸ –ի կողմից՝ որպես բարեգործություն.
- 2020թվականի ընթացքում գյուղատնտեսական տնտեսությունների գյուղ.մթերքների արտադրանքը կազմել է՝ ծիրան 450տ ,24տ հատապտուղ, բազմամյա խոտաբույս՝ 205 տ:
- Համայնքում տարվել է առկա անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքներ և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ.

Աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսության արտադրության վարկավորման գործընթացին,հողաշինության բնագավառում աշխատանքներ են տարվել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման,հողամասերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ.

Աշխատանքներ է տարվել ապօրինի շինությունների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ:

Տրվել է երկու շինարարության թույլտվություն, օրինականացվել է մեկ ինքնակամ կառուցված բնակելի տուն,

Աշխատակազմի կողմից ուսումնասիրվել,պարզաբանվել և օրենքով սահմանված կարգով ընթացք է տրվել գյուղատնտեսության վերաբերյալ շուրջ 13 դիմումներ.

Բյուջեի կատարողականը՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ընդհանուր վարչական բյուջեն 2020թվականի առաջին կիսամյակի կտրվածքով կատարվել է՝ 94.1 %-ով.

1) սեփական եկամուտների գծով՝ 54.9 %
2)հողի հարկի գծով՝ 23.9 %
3)գույքահարկի գծով՝ 64.8 %
4)Տեղական տուրքերի և վճարների գծով՝ 73.7 %-ով:
5)ոչ հարկային եկամուտների գծով՝ 97.8 %

2.Վարչական բյուջեի ծախսերը կատարվել է՝ 68.3 %-ով
1) տեղական ինքնակառավարում՝ 98.4 %
2)կրթություն և գիտություն՝ 97.3 %
3)սոցիալական ապահովություն՝ 98.1 %
4)մշակույթ,սպորտ և կրոն՝ 99.7 %
5)արտաքին լուսավորություն՝ 52.5 %
6)ճանապարհների վերանորոգում 91.6 %

Համայնքապետարանը աշխատավարձի և սոցիալական վճարների գծով պարտք չունի:
Համայնքում կատարված բազմաթիվ աշխատանքների,դեռևս կան չլուծված խնդիրներ:

Համայնքի հիմախնդիրներն են՝

1.Կոյուղու և ներհամայնքային ճանապարհների նորոգում
2.Համայնքի մշակույթի տան ընդհանուր վերանորոգում
3.համայնքի կենտրոնի կառուցում

Համայնքի ղեկավար Տ.Բաղդասարյան

2020թվականի հուլիսի 31,
Հ.Մյասնիկյան